

ԱՐԶԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Հատը 3 մեծալիք Իզմիրի մէջ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹ ԶՈՐԵՔԵՄԱՐԹԻ ԵՒ ՁԵՐԱԹ ՕՐԵՐԸ

Դուրսերը 4 մեծալիք Հատը

Յ. Գ. ՄԱՐԿԵՐՅԱՆ

Համարատու — Տնօրէն

Տ Ա Ր Ե Գ Ի Ն Կ Ա Ն Ի Տ Ի Կ

ԻԶՄԻՐ Օսմ. ոսկի 1
ԴՈՒՐԱՐ Մէճիալիք 6
ՕՏԱՐ ԵՐԿԻՐ Ֆրանք 25

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ա Գ Ի Ն

5 զրուէ տողը ՄԵԿ ԱՆԳԱՍՏ
2 զրուէ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՍՏ
60 փարա ԵՐԵԲ ԱՆԳԱՍՏ

Պ. Գ. ՊԱՆՔԱՐԱՆՅԱՆ

Հիմնադիր

Խ. ԴԵՐԱՅԱՆԱՆ, Կը տնօրինէ բաժանորդագրութեան եւ ծանուցման վե-
րաբերեալ բոլոր գործերը: Բուսիկէ — Պէտէսմէն

Որ եւ է գրութիւն, յօդուած կամ նամակ, որ հեղինակի ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ
կը վերաբերի, տնօրէնին կը դրուի: Սեպտեմբր 17

ԻԶՄԻՐ

Չորեքշաբթի, 19/31 Հոկտ.

Անդրիոյ նաւատորմին հրամա-
նատար, փոխ—ծովակալ լորտ
ձօն Հէյ, քաղաքս հասաւ երկու-
շաբթի օր, Ալեքսանտրա անուն
մարտանաւով:

Իզմիրի Միւթնաբեքի Բաղուպ
Պէյ, երէկ առաւ 25-մէ գնաց
կրկին փեմ. կառավարչին հրա-
մանաւ:

Հեռագրի մը իմաստին նայե-
լով, 25-մէի ջուրերը գտնուող
օտար նաւուց մարդերուն կար-
գելուի, տեղական իշխանու-
թեանց կողմէ, օգնութեան հա-
մար գուրու եղեալ:

Ստամբուլից հասած լուրե-
րուն այսօրվ, տարւոյ 1900-ի
բաշարէն եղած վնասներն ան-
նշան են, երկու տուն միայն
փլած են և քանի մը ճեղքում-
ներ եղած:

Առջի օր առաւօտեան ժամը
3ին առնները կրկին ցնցուցաւ
մեր հողը, սակայն ոչ այնքան
սաստիկ:

25-մէի և Վուրայի երկրա-
շարժին հասուցած վնասները
քննելու համար, այն կողմերը
ճամբորդող մը տեղի ունեցած
վնասներուն ստոյգ հաշիւն ըրած
է որ հետեւեալն է:

ՁԵՐՄԵԻ ԿՈՂՄ. — Օլոմբը, Ըլըճա, Արալթը, Բ' յիւ տէրէ,
Երթիքէ, Կերմէյան, Բարաքէօյ,
Ձէյթուն Ելի, Ձէյթունլար, Պիր-
կի, Սըրատամ, Բասը Օլաճը
գիւղերուն մէջ, որոց բնակիչնե-
րուն թիւն է ընդ ամենը 14 հա-
զար 694, փլած են 2476 տուն,
մեռած են 59 հոգի, և վիրա-
ւորուած 224 հոգի: Բուն 25-
մէի մէջ վնասուած են 2314
տուն, որոց շատն անբնակելի են:

ՎՈՒՐԱՅԻ ԿՈՂՄ. — Էօզլէք, Սարը
Ապտալլար, Տէրիզլի, Դուշ-
ճուլար, Բոճա Տէրէսի, Կիւլէն-
տիք, Տէմէ Տէրէսի, Տէմիլճիլի,
Բըզլէճա, Կիւլ Պաղէ գիւղե-
րուն մէջ անպատասխար բնակչոց
թիւն է 2250, փլած են 280
տուն, աւերուած 216 տուն,
մեռած են 2 հոգի, վիրաւոր-
ուած են 16 հոգի: Բուն Վուր-
այի մէջ կործանած են 3 տուն,
աւերած են 770 տուն որք ան-
բնակելի են, խախտուած են նախ
3 միլիթ, 1 եկեղեցի, փլած են 7

խանութ և աղօթիք, վիրաւոր-
ուած է մէկ հոգի:

Տէմէլի Բէօյի կայարանին գըլ-
խաւորը այս առաւօտ հետեւեալ
հեռագրին ուղղած է Բունթայի
կայարանը:

Ահաւասիկ այդ հեռագրին,
որ անգլիերէն է, թարգմանու-
թիւնը:

«Կըսուի թէ չորս աւաղակներ
երկրասարդ տղայ մը բռնեցին
շրջակաները: Միւլաղիմը զինուոր-
ներ զրկեց ամեն կողմ տեղե-
կութիւններ ուսանալու համար:
Խոստացաւ ինձ պատասխան մը
տալ կէս օրէն ետեւ:»

— Տէմիլճիքի կողմերը Բիւլ-
ճէի մէջ գիւղացի մը, որ 90 օս-
մանեան ոսկի ունէր քովը, կո-
ղպտուեցաւ գիւղ վերադար-
ցած միջոցին:

(Ուէֆօրմ)

ԵՐԿՐԱՆԵՐԻ ԱՌԹԻԻ

ԳԻՏՈՒԹԵԱՆՅ ՃԵՄԱՐԱՆ

Բարիդի գիտութեանց ճեմա-
րանի անդամը հօկտ. 8ին Նիստ
ընելով, Պ. Տոպրէ տեղեկագիր
մը հաղորդած է երկրաբանական
երևոյթներուն վրայ, երևոյթներ
որք տեղի ունեցան Իսթիա կըզ-
զէյի վերջին աղէտից ժամանակ:
Ճեմարանի անդամաց աշխիւ
տուջի գրութեան է աշխարհագրա-
կան քարտէզ մը, որոյ վրայ դր-
ուած է գետինն յցուած մասերը
և երկու ուղիղ գիծ ճեղքում-
ներ, որք եղբայր երկու կէտե-
րէն սկսելով, դէմէն Բաղամի-
չիօլայի աջ անկիւնին վրայ իրա-
բուն կը հասնին:

Այս անկեան վրայ է ահա, որ
ընդգետնայ զօրութիւնը տեղի
ունեցաւ որ հողը պատռուց:

Պ. Տոպրէ փութաց ապացու-
ցանել թէ այդ զօրութեան ար-
դիւնքը հաստատուն մարմիննե-
րու ընդհարումներէ առաջ չեն
եկած, ինչպէս կը կարծէին ու-
սմանք, այլ թէ այդ արդիւնք
կատարելագոյն կը մեկնուին, եւ
թէ երկրագործի որ ջուրը կրնայ
թափանցել մինչեւ այն խորեալ
դէզը՝ որ երկրագործիս ներ-
քին դէզը կը կաղնէ: Արդ, այդ
ջուրն օրինակի համար կը հան-
դիպի սիւնի կոչուած հեղուկնե-
րու որոյ խտնուելով սիւնի վրա-
ներ կը ձեւացունէ: Այս վիճա-
կին մէջ և այս հսկայական ճըն-
շումն տակ, որոյ վրայ հաղիւ
գաղափար կրնանք ունենալ, հե-
տեւեալ երեւոյթները կը գոյա-

նան. այսինքն, սիւնի վրա երկ-
րիս հաստատուն խաւերուն մէջ
կը մանէ և ցորչափ իւր ջուրը
կորսնցունէ, սարսափելի պայ-
թուցիկ զօրութիւն մը կ'ըստա-
նայ:

Պ. Տոպրէ, քանի մը տարի
առաջ ըրած փորձերով կըցաւ
հաստատել թէ սիւնի վրա երկու
կաղնութիւնը բերաւ որ միջո-
ւորներու մէկ ճնշումին կը հա-
մապատասխանէր, թէ ջուրն
բաժնուող և եռացող ջուրն է,
պղպտատայ խողովակներու հա-
տատուն գծերուն վրայ զօրու-
թիւն կը բանեցունէր, թէ այդ
ջուրն հարկաւոր եղած տարա-
ժութեամբ զօրութիւն ստանալով,
խողովակը կը փորէր և իր անցքին
վրայ երկաթեայ հիւլէները կը
փոխադրուէր, թէ վերջապէս
զօրաւոր պայթումներ արտադրե-
լու կարող չուէին քանակութիւ-
նը: Պ. Տոպրէ իր քօնքը վերջա-
յունելով կը յայտարարէ թէ երկրա-
շարժի ցնցումները հրաբխային
խղճուած պայթումներ են:

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԵԱՅԻՐ

Եկամտից յաւելման համար ընե-
լիք առաջին քայլը, իւրաքանչիւր առ-
սաղթի պետութեան պաշտօնէից
ամականները կանոնաւորապէս վը-
ճարելն է, կըսէ ձերիտէի Հալափա
գործը: Եթէ պաշտօնեան իր վար-
ձքն ստանալու ստուգութիւն ունե-
նայ, կառավարութիւնն ալ իր եկա-
մուտները գանձելու ստուգութիւնը
կուտայ վէճի միջոցով պէյի Պէյթէ-
մալի վերականգնութեան տեղեկադ-
րին վրայ խօսած ատեն: Իսկ Երըս-
րէս քաղաքն ալ իր կողմէն կը յա-
ւելու թէ « ձերիտէի դատարանն
ները գուցէ կասկած մը կարտա-
յայտեն զօրութեամբ տեղեկագրոյն
մէջ յանձնարարուած միւս փոփո-
խութեանց կարեւորութեան նկատ-
մամբ, վասն զի վէճի միջոցով պէյ
այնքան որոշ գրած է, որքան որոշ
կը յայտնէ ձերիտէ իր կարծիքը, առ-
սականաց կանոնաւորապէս վճարե-
լուն նկատմամբ:

Սակայն խնդիրն հն է թէ, Գան-
ձային դրութիւնը, իրոյ պիտմաւ ան-
կանոնութեան գլխաւոր մէկ կէտն է
ամականաց վճարումը, յարաբերու-
թիւն ունի բոլոր անհատներու վա-
րձի մասին: Եւ միջոցաւ ամակա-
նաց կանոնաւոր վարումը բացար-
ձակապէս հարկաւոր է, ոչ նուազ
անհրաժեշտ է նաև ամբողջ Գանձա-
յին դրութեան կենսանութիւն տալ

և զօրացունել բարոյական երաշխա-
ւորութիւններով: Գանձուն աղքա-
տութիւնը հետեւեալ է անհսկողու-
թեան, և բազմաթիւ անձինք ա-
ռանց կանոնաւոր ընթացքի մը աշ-
խատցունելու բարոյական արդիւնքն
ալ լաւ վիճակ մը չունենար: Թո՛ղ
Բրուսիական դրութիւնը, վէճի մէջ
տօրք պէյին իր օրինակ առնուե-
լով, լաւագոյն ըլլայ, ատիկա կար-
ծիք մ'է, կարելի է ըլլա մը չփոթէ,
սակայն ինչ որ ալ ըլլայ, կըրջապէս
կանոնաւոր դրութիւն մ'է, և կա-
կած չկայ որ եթէ ի գործ դրուի
Տանկատանի մէջ, Գանձուն հա-
տոյթը սիրտի աւելնայ և Հանրային
վարչութեան վրայ բարոյական լաւ
ազդեցութիւն մը պիտի ունենայ:

ԿԱՅՍԵՐԱԶՈՒՆՔ

Պօլայ թերթերը կը ծանուցա-
նեն թէ կայսերացանց թրիատու-
թեան հանդէսը պիտի կատար-
ուի Երեւանի իմամներուն և թա-
ղապետներուն հրաման զրկուէր
է, որ այս առթիւ իրենց զա-
ւակները թրիատու փափաքող
ծնողաց իմաց տրուի, որպէսզի
տղային անունն արձանագրեն:
ձերիտէի ըսածին համեմատ,
թրիատուները իշխաններն են Սէ-
լիմ էֆէնտի կայսերացուն Նորին
Վեհափառութիւն Սուլթան Ապ-
տիւլ Համիտ կայսեր, Ապտիւլ
Մեհմետ էֆէնտի և Մէհմետ
Շէվքէթ էֆէնտի կայսերացունը
Ապտիւլ Աղի Սուլթանի: Այս
հանդիսին առթիւ վիճ. Սուլթանն
հրամայած է որ Պետութեան բո-
լոր պաշտօնէից մէկ ամանական
վճարուի: Այս վճարումը պիտի
ըլլայ նոր կտրուած մանրուք բա-
տակով, որոյ մէկ օրինակն ար-
դէն ներկայացուած է վեհափառ
Սուլթանի, որ իր գահնուկու-
թիւնն յայտնած է:

Ռուս պատմական հանդէս մը,
Ռուսքիա Սթարինա, Կորչաքօֆ
իշխանին քանի մը յիշատակները
կը հրատարակէ: Ասոնց մէջ հե-
տեւեալը հրատարակին իշխա-
նին բերանէն ըսած է եղեր,
« Յայտնի է թէ 1877 իս եր-
բէք կուսակից չէի ծածկատա-
նի հետ անպատարձմ ընել ու-
ղոյներուն: Ես խորհուրդ տուի
Ալէքսանտր. Բ. Կայսեր, որ բոլոր
տեղութեանց ներկայացուցիչնե-
րը Պէրլին գումարել խնդրէ և
հանդիսապէս յայտարարէ անոնց
որ Ռուսիա պատրաստ է պատե-
րալմ ընելու, բայց կը փափաքի

չընել եթէ տեղութիւնը որոշեն
ի նպատակ ըրիտանէից Պօլայ մէջ
առաջարկութիւններ ընել (Օսմ.
տեղութեան): Իմ խրատս մտիկ
չըրին: Պատեւալմ որոշուեցաւ
որոյ հետեւեալքը գիտէ ամեն
մարդ:

Պէրլին 1878 ի դաշնագրու-
թիւնը իմ կեանքիս ամենէ տը-
խուր երեւներէն մին կը համա-
րիմ: Երբ Պէրլինէն Բէթէրզգուրկ
հասայ, կայսեր ըսի այս խօսքս
իշխատակագրի մը մէջ: Այդ գը-
րութեան մէջ սապէս գրեցի.
« Պէրլին դաշնագրութիւնը իմ
քաղաքագիտական ասպարէզի ա-
մենէ տխուր մէկ երեւն է: »
Կայսրը իւր ձեռքով սա խօսքը
գրեց անոր տակ: « Իմ կենսա-
յալ նոյնպէս: »

ԵՐԿՐԱՆԵՐԻ ԱՌԹԻԻ

Ստամբուլից ինկոյի մէջ անգլի-
երկրաշարժ մը պատահէր է ամ-
սոյս 11 ին: Այս թուականէն օր
մ'առաջ գիշերուան ժամը 11 ին
նախ թերթի ցնցում մ'եղէր է,
բայց հետեւեալ օրն, այսինքն
11 ին, առաւօտեան ժամը 2 ին
ցնցումը կրկնուէր է խիստ զօրա-
ւոր և սաստիկ: Բոլոր տունները
կարճանուելու աստիճան խախ-
տուէր են, շատ պատուհաննե-
րու տաղակները շրջանակներէն ե-
լէր են: Օրէն մէջ այլանդակ ու-
րոտումներ և հողին վրայ տար-
օրինակ բեկբեկումներ գոյացեր
են: Այս երեւոյթները քանի մը
մանրերորդ տեւեր են:

Սան—Պրանիսկոյի մէջ ըսան
տարիէ ի վեր այսպիսի ընդհա-
նուր երկիւղ մը չէր տիրած:
Ցնցման միջոցին բնակիչք անկող-
նէն ցատկելով, տուններէն դուրս
վազեր են: Բարեբաղդաւոր մը-
նաւոր ոչինչ է քանի մը տուններ
միայն վնասուած և կահկարասիք
ու ապակիներ կտրուած են:

ԳՕԼԵՐԱ

Հայասի գործակալութեան
Հոկտ. 23 թուով Ալէքսանտրիա-
յէն քաղաք մէկ հեռագրէր կի-
մացունէր թէ նոյն օրը այդ քա-
ղաքին մէջ գօլէրայէն 9 հոգի
մեռած էին:

Մամուտը լուրեր մէկ երկու
օր առաջ կ'իմացունէին թէ նոյն
օրը փոխանակ 9 ի 27 հոգի մե-
ռած էին: Իսկ ամենէ վերջին
լուրերը կը ծանուցանէին թէ նո-
րէն սկսած է նուազել:

լիտ, տիկին Տիմիշին, տիկին Նու-
այլ, տիկին Նելիտով, տիկին Ռա-
տովիչ, տիկին Գուստովիչ և
տիկին Ռատովիչ գեղականները և
Նուստովիչի անունով 13-ին,
քաղաքացիական թատրոնին
մէջ : Պաշտօնը պիտի մնայ ձմեռան
եղանակին :

—Վեհափառ Սուլթանը 2,500
ոսկի շնորհած է Վուրլան և 25,000
արկածեղ թաղապետի համար :
Այս դուստրը Նորին Վեհափա-
ռութեան մասնաւոր մէկ թիկնա-
պահը պիտի անսի, իր ձեռքով
բաժնեւոր համար : Սուլթանը
հրամայած է նաև Բարձրագոյն
Դերան 200,000 դրոշ յատկացու-
նել այդ արկածեղ, որ պիտի
վճարուի Գանձուն ընդհանուր
եկամուտէն, նաև զրկել 15,000
քաղաքացիական, 20,000 գերան
և 30,000 տախտակ :

—Վազը լեծանուցանէ թէ,
լեզուագիտական դպրոց մը պիտի
բացուի Պոլսոյ մէջ : Այս դպրո-
ցին մէջ պիտի ուսուցուի մաս-
նաւորապէս Դաղդիերէն լեզուն,
որոյ ուսումը հինգ տարի պիտի
տեւէ և ստիպողական պիտի ըլլայ
այն ուսանողաց համար որք ար-
տաքին գործող նախարարութեան
մէջ պիտի գործածուին իսկ կա-
մայական պիտի ըլլայ միւս նա-
խարարութեանց պաշտօնները
ըստ համար : Դպրոցը 5 կարգ
պիտի ունենայ և պիտի ընդունի
նաև կառավարութեան գործող
մէջ պաշտօն չունեցող դուռնէն
ուսանողներ ալ, եթէ տարին 20
ոսկի վճարեն : Մասնաւորապէս
դաղդիերէնէ տաճիկերէն և տաճ-
իկերէնէ դաղդիերէն թարգմանե-
լու կանոններն ու կերպերը պիտի
ուսուցուին հոն : Դպրոցը Հան-
րային կրթութեան նախարարու-
թեան կախում պիտի ունենայ,
սակայն արտաքին գործող նա-
խարարութեան հսկողութեան
տակ պիտի ըլլայ, և ծախքն ալ
այս վերջինը պիտի ընէ :

—Աթէնքի լրագիրները լեծա-
նուցանեն թէ, Հելլեն կառավա-
րութիւնը 25,000 արկածեղ
համար զրկած է 5000 քաղ հաց
և 4000 տախտակ : Սիրայի քա-
ղաքացիական ժողովը ալ 3000
ֆրանքի վարկ մը որոշած է նոյն
արկածեղ համար :

—Պոլսոյ թերթերէն կ'իմա-
նանք թէ, ամենա, Տ. Ներսէս
Ս. Պատրիարքը իր առողջական
վիճակը գտած ըլլալով, քիչօրէն
իր պաշտօնին պիտի սկսի :
—Մառօք կիմանա՞ր թէ, Մա-
սիս լրագիրը երկամեայ դադար-
ման դատաւարութեան է, որոյ
տեղի տուէր է, ըստ պաշտօնա-
գրին, հասարակայն միտքը չի ու-
թող կամ գրգռող հրատարա-
կութիւններ ընելը :

—Բարձրագոյն Դուռը Պու-
կարիոյ գործակատարին հետ
բանակցութեան մէջ է, Թուր-
քոյ—Պուկար սահմանագրին
վրայ՝ առաջակութիւնը ջնջելու
նպատակաւ միջոցներ ձեռք առ-
նուելու համար :

—Է. Բարձրագոյն մէջ հետեւեալը
կը կարդանք. «Ծածիկ կանանց»
չարաւար ձգելով ֆերմէն հաղ-
նելու համար տրուած երկու ա-
միս պայմանագրով լրացած ըլ-
լալով, ոտակականութեան գործա-
կալք սկսած են արդէն այս ար-

գիւրման գործադրութիւնն ապա-
հովել, աղբ առնելով նախ, առ-
կաւին ջարջաւ հազած և երեսը
նուրբ բեհեղով չուկաներն ու
փողոցները ժուռած ող կանանց,
Այս օրուան Վազը երկար ա-
ղերսագրի մը օրինակը կը հրա-
տարակէ, զոր տուած են առ-
վեհափառ Սուլթան, Սէլամըքի
միջոցին, ջարջաւ ծախող էսնաֆ-
ները : Ասոնք աղերսագրին մէջ
խոնարհաբար դիմել կուտան թէ,
ջարջաւ գործածութեան արգի-
լումը մահացու հարուած մը կու-
տայ տեղական արուեստին ջար-
ջաւ շինուելու կտաները, որք
առհասարակ կը գործածուին Պաղ-
տատի, Պէրուլի, Հայէպի և նոյն
իսկ Իսլամական սուրբ քաղաքաց
այսինքն Մէքքէի և Մէտինէի
մէջ, երկրին գործարաններէն
կ'ելլեն, մինչդեռ Թերաքիէ հա-
մար գործածուած կտաներն օ-
տար երկրներէ կուգան :

Աղերսագրիւր կը գիտեն նաեւ
թէ, ջարջաւ գործածութիւնը
հակառակ չէ նուիրական օրի-
նաց, այլ միայն երեսը դուռած
կտաւին նրբութիւնն այդ օրի-
նաց հակառակ, և պարտ էր լոկ
բարակ լաթին գործածութիւնն
արգիլել, աւելի հաստ լաթ գոր-
ծածել հրամայելով : Աղերսա-
գիրը կը պաշտօնին վերջապէս
ն. Վեհափառութեան, որ ուշա-
գրութեան առնուլ բարեհաճի
այդ արգիլումին իրենց համար
հետեւելիք մնաք, առաջարկելով
թէ ձեռքերնին ահագին քանա-
կութեամբ ապրանք ունին, զոր
ուրիշ բանի համար չեն կարող
սպառել և որ պիտի ստիպէ զի-
րենք վճարումին դադարեցունել
ի վրայ թէ՛ իրենց և թէ՛ գոր-
ծարանատնաց, առանց հաշուե-
լու նաեւ այն մնաք որ պիտի
ըլլայ Պրուսայի, Դանսկիոյ, Հա-
լէպի, Պաղտատի և այլն 30,000
գործաւորաց որք ուրիշ գործ
չգտնելով կարօտ և թշուառ
պիտի մնան : Աղերսագիրը Նորին
Վեհափառութեան գիտարու-
թիւնն ու արդարասիրական ըզ-
գացումները կը հրաւիրէ իր հը-
պատակաց գործաւոր դասին վը-
րայ և կը պաշտօնին խոնարհաբար,
որ ջարջաւ արգիլումը վերցը-
ուի : »

ԱԶԳԱՅԻՆ

ՄԵՐ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

(Նախորդ թիւէն շար.)

Գրիգոր Պահլավունի, տղայ
մանկանուեստին, Դուրի ընդ-
վզումը լսելով, եկեղեցական ժո-
ղով կ'ուսմարէ Կիլիկիա (Սեա-
լեքը), ուր երկու շաբաթ չէր
ձևուր իրեն Արեւիկայի եպիսկոպոս-
ներ, վարդապետներ, վանահայ-
րեր և միանձնականներ ներկայ
կ'գտնուէին՝ որոնց կ'առաջարկէ
խնդիրը. սոյն ժողովուն մէջ Դա-
ւիթ և իւր համախոհները կը
դանեն իրենց արժանաւոր ըն-
դունելութիւնը նախանձնի բա-
նադրանքով մը, և ամեն կողմ
գրեւոր նշով կ'ընեն այն ամե-
նուն համար, որ կը յանդգնին
որեւիցէ կերպով կաթուղիկոսա-
կան կամ եպիսկոպոսական առ-
տիճան բարձրանալ ընդդէմ կա-

մաց ՕՐԻՆԱՒՈՐ պետին. և ար-
գարեալ բանադրանք և նշով ի-
րենց անմիջական արդիւնքը կու-
նենան և ամեն կողմէ հրովթեան
և հնազանդութեան յայտարա-
րութիւնը կ'սկսին տեղալ առ օ-
րինաւոր կաթուղիկոսն, և ոչ
այսքան միայն, այլ և Լուսաւորչի
Ս. Այն ու գաւազանն Աղթամա-
րէն գողնալով կ'ընեն օրինաւոր
կաթուղիկոսին ի Սիս :

Ինչպէս ընթերցողը յայտնի
տեսաւ՝ Աղթամարայ աթոռը գո-
յութիւնն առած է անդառին 1113
թուականէն, Գրիգոր աղա մա-
կանուեստը կաթուղիկոսի օրով
թէպէտև Բագրատունեաց ժա-
մանակը մեր հարազատ կաթու-
ղիկոսներէն ոմանք նստած են
անդ, բայց ոչ իրեն սեպհական
աթոռ, այլ իր բարեպաշտով տե-
ղի, մինչև որ աթոռը կ'փոխա-
գրէ յԱմի, իսկ Թուրքիի որդ-
ւոյն Դաւիթ միջոցաւ վտարանջե-
լով՝ կ'ընենայ ինքնաշուք :

Այսպէս Աղթամար Հայաստան-
եայ եկեղեցւոյ միութիւնը քակ-
տեւէ ետեւ՝ 1409 թուականին
մեծ երկպառակութիւն կ'ազդի
հոն, զի վիճակին առաջնորդներն
ու իշխանաւորները կաթուղիկո-
սին հետ գծտելով և թշնամա-
նալով՝ կ'ստրկեն զայն աթոռէն
ձգել և չեն ուզեր ճանչել այլևս
անոր ՀԱՅԱՍՏԱՆԻ առաջնորդու-
թիւնը. սոյն մտքը շատ տեղեւ
ևս կ'գրեն և իրենց միտքը կը-
յայտեն :

Նոյն միջոցին Տաթևու Գրիգոր
վարժապետն իր աշակերտներով
Մեծոքայ վանքն եկած լինելով՝
ուր ողջուն տարի մի կը կենայ՝ Աղ-
թամարից և ուրիշներ անոր գի-
մելով իրենց կաթուղիկոսի նը-
կատմամբ ծանր ամբաստանու-
թիւններ կ'ընեն. այն ալ Մեծո-
քայ վանահայրին խնամքով քանի
մի վարդապետներ ժողովելով՝ ա-
նոնց հետ կ'ստորհրդակցի՝ որպէս
զի նոյն վիճակի ալ դեն հարա-
զատ և օրինաւոր կաթուղիկոսին
իշխանութեան ներքև և այսպէս
Աղթամարայ կաթուղիկոսը ձգե-
լով աթոռէն՝ ամեն կողմ կ'ընեն
ու կ'իմացնեն, նոյնպէս այս ամե-
նայքերը հաղորդելով հարազատ
կաթուղիկոսին Յակոբայ ի Սիս
իրենց հպատակութիւնը կ'այտա-
նեն. սակայն այս միութիւնը կա-
տարեւապէս չ'աջողիր. զի սակա-
ւիկ մի յետոյ ոմանք եկեղեցա-
կաններն և աշխարհականներն
անկեալ կաթուղիկոսին պաշա-
պան կենալով վերստին իւր ա-
թոռը կ'նստեցնեն զայն ԱՅՆԱԶԳԻ
ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆԻ ձեռքով և Վե-
ՐՍՏԻՆ պատճառ կըլլան երկպա-
ռակութեան :

Աղբիս ողջամիտ մասն իւր
ձեռնարկին մէջ անյաշող երեսի
ետեւ՝ շատ չանցած միւս ևս հը-
ռուած մի վրայ կ'հասնի և ահա
միւսնոյն ժամանակի մէջ կ'երեւին
երեք կաթուղիկոսներ մին՝ Սիս,
մին՝ Աղթամար և միւսն իշխա-
ծին, որով աղբը կ'ընենայ ե-
ռազուրկ հրէշի. զի 1441 թուին
լսել մ'եկեղեցականներ ժողով
գումարելով իշխածին՝ Գրիգոր
Մուսաբէկեանց հարազատ կա-
թուղիկոսը Սիսէն կ'հրաւիրեն
հոն, և երբ նա չ'անսարձ կ'ընա-
կուս Վերապետին իշխանայ կա-
թուղիկոս կ'հաչակեն :

Սոյն այս Կիրակոս վարդապետ
ամեն կողմ թուղթ գրելով բա-

նադրանաց տակ գտնուող տե-
ղերն իւր օրհնութեան կոնդակ-
ներով կապանք կ'արձակէ, ինչ-
պէս նաև Աղթամարայ կաթու-
ղիկոսութիւնը, մասնաւորապէս
ինքն ալ երբեմն նոյն միտքանու-
թեան կ'վերաբերէ :

Կիրակոս մեծ հոգ կ'տանի իշ-
խածինը պայծառացնելու և բա-
ւական գործ կ'տեսնէ, սակայն
երկու տարիէն ետք Մակար ա-
նուն եպիսկոպոսի մ'երեսէն իշ-
խածին ևս իւր մէջ պառակտե-
լով՝ մեծամեծ աղմուկով շփո-
թութիւն կ'ծագի Աղբիս մէջ, և
Մակար երեսնի չափ համախոհ-
ներով կ'յաշողի Մոսկուայ Գրի-
գոր եպիսկոպոսն օժել և կար-
գել կաթուղիկոս, որով Կիրակոս
կ'ստիպուի թաղիլ տուն մի,
յորմէ յետոյ կ'ընալու վանք մը
ուր և կ'վստիանի :

Աղթամար, որ ի սկզբան իշ-
խածին իշխանութեան կը հպա-
տակի՝ նորա սոյն պառակտումը
պատրուակ բռնելով ետ կը կե-
նայ հպատակութեան և միաբա-
նութեան, յորմէ հետեւ այսպէս
անկերպարան կը տեսէ աղբիս
սոյն եռագլին Հայաստանութիւ-
նը. Գագիս իւր շօշափելի
օրինակ «երեք անձն և մի բնու-
թիւն» վարդապետութեան.

Այսքան մը մեր կաթուղիկո-
սութեան անցելոյն վրայ տեղե-
կութիւն տալէ ետեւ՝ կը գառ-
նամ վերստին իմ բուն նպատա-
կիս, որ է Աղթամարայ վերջին
տարիներու վիճակն ու ընթաց-
քը մէջ երեւել, ընթացք պատ-
ուարեւ Գրիգորութեան, ցոյց
տալու համար թէ այս տեսակ
հարազատ. ծնունդներէ կա-
րելի է օգուտ քաղել կամ դժ-
նիկէն խաղող.

Իոյդ
ՕՐԳԵԼ

ԱՌ ԲԱՆԱՍԻՐՍ

ՔԵՐԹՈՂԱԿԱՆ ԸՆԹԵՐԳՄԱՆԵՐ

Վերթողական ընթերցմանը՝
միայն բանաստեղծի մը երկերը,
իւր կենսագրութեան նկարագիրը
և իւր վրայ եղած ընթադրա-
կան փորձագրութիւնները կար-
գալու վրայ չ'կայանար, երբ մե-
կը բողբ ասոնք կը գործադէր և
մեծ ինամով գործադէր, կրնայ
գրքին պարունակութեան վերա-
հասու ըլլալ, բայց ոչ քերթողին
Բանաստեղծութիւնը հանճարի-
մաց առաջադրութեանց հարցա-
կէտ մը չէ. տրամաբանական ի-
մացութեամբ չ'իմաստասիր-
ուիր, այլ՝ զգացողութեամբ :
Այն՝ որ բանաստեղծութիւնը չըզ-
գար, իւր անձին վերաբերմամբ
կը յուսահատի թէ ինչպէս իւր
միտքը բացայայտէ : Ամենէ հան-
ճարաւոր մարդը՝ կրնայ անխե-
լահատ ըլլալ բանաստեղծութեան,
ինչպէս ու Տր. Ճօնսէն էր՝ Միւ-
տովիս նուագերգութիւններուն,
որոց համար կը հաստատէր թէ
«միակ բանը որ կրնայ բուռի
գերազանց բանի մը համար, այն
է՝ որ գէշ չ'էին» : Այսու ամե-
նայնիւ, թէ է բանաստեղծու-

թեան՝ զգացմամբ վերահասու
կըլլուի, սակէ չ'հետեւիր թէ իւ-
րաքանչիւր ոք զգացմամբ կամ
առանց զգացման ծնած է քան
թէ բանաստեղծութիւն վայելե-
լու. և թէ քերթուած ընթեր-
ցող մը՝ ինչպէս քերթողը, «ծը-
նած է և ոչ թէ եղած» : Ի բա-
կըջանէ անտի զգացման ժա-
ռանգական կարողութիւն մի կայ
որ հին քաղաքակրթութեան ըն-
կերութեան մի մէջ տարածուած
է, զգացում մի՝ որ ծնունդ ա-
ռած է առարկայնորդ՝ որք գե-
ղեցիկ, նկարագրական, կամ բա-
նաստեղծաբար մտահնարական
է : Հոն զգացումը ի բնէ կու-
գայ, բայց կրնայ անվերջանա-
լաբար բարգաւաճել և կամ կըր-
նայ սեղմուիլ ու վերջապէս բա-
պառել, ճիշդ նման բարկութեան
այն կրաշարժութեան՝ որ տա-
կաւար կը սնանի ու կը զօրա-
նայ մինչև որ վրէժխնդրութեան
կատարի բաղձանքի մը կը փոխ-
ուի. ճիշդ նման անգթութեան
այն կրաշարժութեանց որ աստի-
ճանաբար զարգանալով՝ մինչև
որ Դոմիտրիանովի մը պէս, որ
ճանճ սպաննելով կըսկսի և կըր-
նայ վերջանալ մինչև անգամ
մարդիկ սպաննելով իր հաճու-
թեան համար. «հա այս կեր-
պով կրնայ քերթողական կրա-
շարժութիւնը անգամաւ լսել, թէ
իրեւ գողցարական րոյս՝ մեծ
ինամը կը պահանջէ, իր պատեհ-
աթութիւնները ամենուրեք են
Բարդական պարտազգացութեան
զգացման ներքնայինը՝ օրական
և ժամական են : Բանաստեղծու-
թիւնը միայն մատենաց մէջ չը-
գտնուիր. բնական դաշտանակա-
րութեան մէջն է, մարդոց եղանա-
կաց ու բնաւորութեանց մէջ, հա-
սարակ տեսութեանց ու ձայներու
մէջ : Բանաստեղծութեան մատ-
եանները, ճշմարտան բնութիւն,
երկ-
րորդական ձեռքէ ելած ներկա-
յացումներ են միայն. խօսքով
չ'իմուած յիշատակագործութիւն-
ներ են այն բաներուն՝ զորս որ
և է անձ մի զգացած է : Ասոնց-
մէ բան մի շինելու համար,
պէտք է որ մտքերնին՝ առարկայ-
ներու բանաստեղծական, մարդ-
կային կենաց բնաւորական, կրա-
քաղական, գեղական երե-
ւոյթներ տալու նպատակաւ նա-
խմը :

Մատենական բանաստեղծու-
թիւն կարգաւոր առաջին յատ-
կութիւնը, «առօրեայ անցից շու-
տանիով և պատրաստական հո-
մակութիւն մի է : Ճշմարտութեան
բանաստեղծի մը մեղ համար ը-
րած ուրիշ բան չէ, բայց եթէ
մեր փորձառութեամբ գիտցած-
ները աւելի կենդանութեամբ,
պատմութեամբ և կրեւք ըրած
մտայայտութիւն է. իւր վրայ կը
հիմնամբ, ըստ որում ունի մե-
րինէն աւելի ընդարձակ հորի-
զոն տեսութեան, ու աւելի ան-
հուն տաղանդութիւն մի և նոյն ա-
ռարկայնէն զգածութեան, որք
նուազ աստիճանաւ զմեզ կ'ըզ-
գածեն : Ինչ է ուրեմն գլխա-
ւոր արդեւքները զորս մեր գործ-
նականաբար կըզգամք բանաս-
տեղծութեան մեր վայելման մէջ,
մեր՝ որ հաւաքաբանաւ քաղա-
քակրթութեան մի մէջ կ'ապ-
րինք :

(Շառնտակէ)

(*) Քաղաքիս ազգային բազմա-
ղիւն գրադէտներն մին թոյլին
թարգմանելով ուղղած է առ մեզսոյն
յօդուածը, զոր կը հրատարակենք
բանասիրաց համար :

